Ալեքսանդր Ծատուրյան

Արշալույսը ծովի վրա

(Նվեր նկարիչ Վարդգես Սուրենյանցին)

Ուզո՞ւմ ես դու տեսնել վսեմ բնության
Մի հրաշքը անպատմելի՞ մի պատկեր,
Որից դյութված, անշարժ, որպես լուռ արձան,
Որին հառած խոր հիացքով լի աչքեր,
Նայե՞ս ապշած, նայե՞ս անվերջ ու անհագ
Դո՞ւրս եկ ծովափ արշալույսի ժամանակ:

Ուզո՞ւմ ես դու ողջ էությամբ նորոգված,
Ամենայն ինչ, ողջ երկրայինն մոռանալ,
Մտքով ազա՞տ, կյանքի լուծը թոթափած,
Անուրջների պայծառ աշխարհ վերանալ,
Գրկե՞լ հոգով տիեզերքը բովանդակ
Դո՛ւրս եկ ծովափ արշալույսի ժամանակ:

Օ՛, այդ ժամին դու կըտեսնես, դու կըզգաս
Անհաղթ ուժը, անհաս փառքը արարչի
Ո՛վ է և մեծ, և՛ երկրի տերն հանապազ.
Եվ ո՞ւմ պետք է մարդս կյանքում ճանաչի:

1896, Գուրզուֆ